



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 30 ՍԵՄՏԵՄԲԵՐ, 2024

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԻՆՁՔԱՆ ԿԸ ՍԻՐԵՄ ՕՐԷՆՔԴ

Ինչքան կը սիրեմ Օրէնքդ,
ամէն օր ան է խորհրդածութեանս առարկան:
Պատուէրներդ զիս թշնամիներէս աւելի իմաստուն ըրին,
որովհետեւ զանոնք ընդմիշտ ինս դարձուցի:
Բոլոր ուսուցիչներէս խորամիտ եղայ,
որովհետեւ պատուիրաններդ են մտածումիս առանցքը:
Տարեցներէն աւելի խորիմաց դարձայ,
որովհետեւ հրահանգներդ գործադրեցի:
Բոլոր չար ճամբաներէն հեռու մնացի,
որպէսզի քու խօսքերդ գործադրեմ:
Օրէնքներդ չեղեցայ ես բնաւ,
որովհետեւ դուն ինքդ զանոնք ինձի ստրկեցուցիր:
Ինչ քաղցր են խօսքերդ ինձի համար,
ինչքան որ մեղրը՝ քիմքիս համար:
Հրահանգներուդ հետեւելով՝ խորիմաց դարձայ.
ուստի արեցի բոլոր խարդախ ճամբաները:

ՇԱՐԱԿԱՆ

Սիրոյքք չուր արկեալ յերկիր՝ բորբոքեցի ի Հոգիս մեր.
զխորհուրդ սրտից մեր մաքրեցէ՛ զլոյս գիտութեան քո փայլեցէ.
Ի քնոյ մահու զմեզ զարթուցէ, զմիտս բոցովքո վառեցէ
զի ի սուրնջեան եւ գիշերի, տացուք քեզ փառս անլուելի:
Ի քեզ նայիմք լոյսը անմատոյց, ի զգայական ծածկեալ լուսոյ.
որ վանն մեր եղար ի գբի, եւ ննջեցեր ի տապանի.
առ մեզ ննջեալ արթուն բնութիւն, Հերքեալ զչարին ներգործութիւն.
զի ի սուրնջեան եւ գիշերի, տացուք քեզ փառս անլուելի:

ԱՊՈԹՔ

Սիրով ընդունէ, հօր Տէր Աստուած, դառնացածիս աղաչանքը: Գթութեամբ մօտեցիր ամօթահարիս: Փարապէ, ով ամենապարզեւ, ամօթի փխրութիւններս: Վերցուր վրա-յես, ով Ողորմած, անբանելի ծանրութիւններս: Հեռացուր ինձմէ, ով ամենահնար, մահա-ցու սովորութիւններս: Աւարի փուր, ով մշտապաղթ, խաբողին հաճոյքները: Հեռու վանէ, ով վերնային, կարաղի մառախուղը: Կասեցուր, ով կեցուցիչ, կորուսիչն գործերը: Չիր ու ցան ըրէ, ով ծածկարես, ըմբռնողին հնարքները: Խորտակէ, ով անքնին, կռուողին յարձակումները: Եւ քեզ փառաւորենք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԿ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)

Փրկել գմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածամին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ր եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐՕԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղէրոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՎ 69

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԱՂԱԿ

Պարասխան փուր ինձի, ով Տէր, որովհետեւ քաղցր է քու սերդ.

քու անսահման գթութեամբդ հասիր ինձի:

Երես մի դարձներ ինձմէ՝ քու ծառայելդ.

նեղութեան մէջ եմ, շուքով պարասխան փուր ինձի:

Մօտեցիր ինձի եւ փրկէ զիս. ազատէ զիս, որպէսզի թշնամիներս տեսնեն:

Դուն գիտես իմ կրած նախափինքս, կրած ամօթս եւ անարգանքս,

եւ կը ճանչնաս իմ բոլոր ոտխներս:

Նախափինքները ընկճեցին սիրտս, եւ ես հիւանդացայ:

Ինձի ցաւակցող փնտռեցի, բայց չկար. մխիթարիչ մը փնտռեցի, բայց չգտայ:

Ուրեղիքի փոխարէն լեղի փութին ինձի, երբ ծարաւ էի՝ քացախ փութին խմելու:

Թող որ Աստուծոյ հետ հաղորդութեան իրենց սեղանը

զիրենք կործանող թակարդ մը ըլլայ,

հաշտութեան գոհը՝ կորուստի պարճառ ըլլայ իրենց:

Թող խաւարին իրենց աչքերը, որպէսզի չտեսնեն.

թող անոնց մէջքը կորացած մնայ ընդմիշտ:

Բարկութիւնդ թափէ անոնց վրայ, քու ահել զայրոյթովդ ողողէ զանոնք:

Թող անոնց քաղաքները աւերակ մնան, անոնց փուները բնակիչ չունենան:

Որովհետեւ երբ դուն հարուածեցիր զիս՝ իրենք եւս հալածեցին.

երբ դուն վիրաւորեցիր՝ իրենք աւելի ցաւցուցին զիս:

Դարապարտէ զիրենք իրենց անթիւ յանցանքներուն համար,

փրկութեանդ մէջ տեղ մի փար անոնց:

Թող ջնջուին Կեանքի Գիրքէդ, արդարներու ցանկին մէջ տեղ չունենան:

Գալով ինձի, ես տառապեալ եմ ու վշտահար, փրկէ, ով Աստուած, եւ բարձրացուր զիս:

Պիտի օրհներգեմ Աստուծոյ անունը, գոհաբանութեամբ պիտի փառաւորեմ զինք.

եւ ասիկա աւելի ընդունելի է Տիրոջ, քան թէ իբրեւ ողջակէզ իրեն գոհուած եզն ու ցուլը:

Տառապողները թող տեսնեն եւ ուրախանան, դուք՝ որ Աստուծոյ կը դիմէք, սիրտ առէք:

Որովհետեւ Տէրը կը լսէ ջրաւորներուն ձայնը, եւ չի սոռնար իրենները,

որոնք կապանքներու մէջ են:

Աստուծոյ օրհնութիւն երգեցէք, ով երկինք եւ երկիր եւ ծով,

եւ անոնց մէջ գտնուող բոլոր արարածներ:

Աստուած պիտի փրկէ Սիոնը, եւ վերաշինէ Յուդայի քաղաքները,

իր ժողովուրդը հոն պիտի բնակի եւ տէր դառնայ անոր.

իր ծառաներուն սերունդները պիտի ժառանգեն զայն,

զինք սիրողները այնպէս պիտի բնակին:



ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԱՂԱԿ 69:16-36

Կը շարունակենք 69:16-36 Սաղմոսը: 13-15 համարներուն մէջ Դաւիթ ներկայացուց թէ պիտի աղօթէ Աստուծոյ, որովհետեւ Անոր հաճութիւնը ունի, առաւել եւս զԱստուծ կը ճանչնայ գթառար ու հապարհիմ փուած խոստումին, որ եթէ Աստուծ խոստացած է, ուրեմն հաւապարհիմ է Իր փուած խոստումին եւ այդ խոստումը պիտի կատարէ: Շարունակելով, դարձեալ Դաւիթ կը խնդրէ որ Աստուծ պարասխան փայ իրեն այս անգամ նկարի առած Աստուծոյ սէրը որ այնքան քաղցր է, եւ գթութիւնը անսահման: Սա մեզի կու փայ առիթը մտածելու եւ ըստ այնմ ճանչնալու զԱստուծ իբրեւ սէր եւ ան-սահման գութ: Ահա թէ ինչու Յովհաննէս Առաքեալ պիտի ըսէ. «Աստուծ սէր է»: Ուրեմն ամէն ինչ որ կ'ընէ սէրէ մղուած: Ահա արտայայտութիւն որ որուն համար Դաւիթ կը խնդրէ, որ Աստուծ իրմէ երես չդարձնէ, այլ խօսքով Աստուծոյ ներկայութիւնը զգայ Դաւիթ, մանաւանդ երբ նեղութեան եւ հալածանքի վիճակի մէջ է:

Դաւիթ նաեւ կ'արտայայտուի այնպիսին, ուր կը ներկայացնէ կրած նախապիւնքը, ամօթն ու անարգանքը, որոնք սակայն նախապիւնք էին զալիք այն վիճակին որմէ պիտի անցնէր նոյնինքն Յիսուս Քրիստոս, երբ մարդիկ զինք պիտի նախապէին, ծախրէին, անարգէին, եւ պիտի չգտնուէր որեւէ մէկը ցաւակցող կամ միտաբարող, ընդհակառակը պիտի ծաղրէին: Տակաւին, Դաւիթ կը մարգարէանայ մինչեւ իսկ «ուրելիքի փոխարէն լեղի փուին, ծարաւ էի՝ քացախ փուին խմելու»:

22-28 համարները կը ներկայացնէ թէ ինչ պիտի պարտաւոր անոնց որոնք պահեցին արտաքին բաժինը իրենց ձեռքի ու ծիսակատարութեան, բայց ոչ իրենց հաւաքարմութիւնը Աստուծոյ հետ: Ընդհակառակը, Դաւիթի կը խնդրէ որ իրենց այդ հաղորդութեան սեղան իրենց համար թակարդ ըլլայ, հաշտութեան գոհը՝ կորուստի պարճառ: Այս բոլորը Դաւիթի ըսելովը չէ որ փեղի պիտի ունենայ, այլ՝ սա հետեւանքն է բոլոր անոնց որոնք անհաւապարհիմ եղան, կ'ըլլան ու պիտի ըլլան Աստուծոյ նկարմամբ: Անոնց աչքերը խաւարին, որ չտեսնեն: Կը խնդրէ որ Աստուծ Իր բարկութիւնը թափէ անոնց վրայ: Ահա մէկ այլ ուրիշ մարգարէութիւն մը կատարած Յուդային, «Անոնց քաղաքները աւերակ մնան, անոնց փուները բնակիչ չունենան», այս փողերը կը կարդանք Գործք Առաքելոց 1:20: Ան կը խնդրէ որ անոնք ջնջուին Կեանքի Գիրքէն, որ նաեւ ծանօթ է որպէս արդարներու ցանկ:

30-36 համարները կը ներկայացնեն Աստուծոյ անունին գոհաբանութիւն եւ փառաբանանք, որ շատ աւելի աղէկ է եւ ընդունելի քան որեւէ մէկ ողջակէզ եզ կամ ցուլ: Այսինքն՝ անկեղծ սրբէ, հոգիէ բխած աղօթք փառաբանանք ուղղուած Աստուծոյ, քան ողջակէզ: Ան նաեւ կը քաջալերէ ու կը խրախուսէ փառապողները, որոնք Աստուծոյ կը դիմեն, որովհետեւ Տէրը կը լսէ ջրատրներուն ձայնը, այսինքն՝ հոգիով աղքատներուն ձայնը, սրբով մաքուրներուն ձայնը: Ահա յոյսի երգ, որ աւարտին ինչ ալ ըլլան պայմաններն ու պարագաները Աստուծ պիտի փրկէ Սիոնը, այսինքն՝ Աստուծոյ լեռը, այն լեռը որ Աստուծոյ բնակութեան վայրն է: Եւ զԱստուծ սիրողները յոն պիտի բնակին: Ո՛ր է այդ «հոն», Քրիստոս յարակօրէն կ'ըսէ. «Հոն ուր որ ես եմ, այնտեղ նաեւ պիտի ըլլայ իմ պաշտօնեայն»:

Պ*ահապան ամենայնի Քրիստոս,
աջ էն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի քանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ էն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*